



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Երևան, 0025, Արովյան 52^ա • Республика Армения, Ереван, 0025, Абовяна 52^а • 52^а
Abovyan, 0025, Yerevan, Republic of Armenia(+374 10) 54-43-91/94,95,96/1 ՀՀ -37,
armphilology@ysu.am, www.yasu.am

Ա Ր Չ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 4

ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏՄՈՐՀՐԴԻ՝

2022 Թ. ՀՈՒՆԻՍԻ 1 - ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Օրակարգում՝

1. 2021-22 ուստարվա 2-րդ կիսամյակի դասերի ամփոփում և քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ամփոփում և ֆակուլտետում:
2. Պետական քննական հանձնաժողովների նախագահի հաշվետվությունը:
3. Ամփոփումների միաձուլման գործընթացները ֆակուլտետում:
4. Կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունը կատարած աշխատանքների վերաբերյալ: 2022-23 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաստատում:
5. ԵՊՀ ուսումնական գործընթացների կազմակերպման նոր կարգի դրույթների քննարկում:
6. Ս/թ. մայիսի 26-ին տեղի ունեցած ԵՊՀ գիտխորհրդի նիստի մի քանի որոշումների մասին:
7. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում:
8. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտական խորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ գիտխորհրդի 36 անդամներից նիստին մասնակցում է 25-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ընթերցեց նիստի օրակարգը, որը հաստատվեց միաձայն բաց քվեարկությամբ:

Օրակարգի 1-ի հարցի առթիվ հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի տեղակալ, դոց. Ա. Սարգսյանը տեղեկացրեց, որ նախապատրաստական աշխատանքները ավարտվել են, քննաշրջանը արդեն բնականոն ձևով մեկնարկել է, ուսանողներից դժգոհություններ չկան:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի տեղակալ, բ.գ.թ., դոց. Ա. Սարգսյանին, ով ընթերցեց առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահ բ.գ.դ. Վարդան Դերիկյանի հաշվետվությունը, որում մասնավորապես նշված էր.

2021-22 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել բակալավրի 13 ուսանող: Երեք ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 19

միավոր, երկու ուսանող՝ 18 միավոր, մեկ ուսանող՝ 17 միավոր, մեկ ուսանող՝ 16 միավոր, մեկ ուսանող՝ 15 միավոր, երեք ուսանող՝ 12 միավոր, մեկ ուսանող՝ 8 միավոր:

«Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 29 ուսանող, մեկ ուսանող չի ներկայացել պաշտպանությանը: Երեք ուսանող ստացել է 20 միավոր, չորս ուսանող՝ 19 միավոր, հինգ ուսանող՝ 18 միավոր, երեք ուսանող՝ 17 միավոր, մեկ ուսանող՝ 16 միավոր, հինգ ուսանող՝ 15 միավոր, երեք ուսանող՝ 14 միավոր, երկու ուսանող՝ 13 միավոր, մեկ ուսանող՝ 9 միավոր, երկու ուսանող՝ 8 միավոր:

Մագիստրոսական թեզեր պաշտպանվել են երեք ծրագրով՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ», «Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն», «Հայ գրականություն»:

«Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է 10 ուսանող, մեկ ուսանող չի ներկայացել պաշտպանությանը: Պաշտպանությանը մասնակցած ուսանողներից երեք ուսանող ստացել է 20 միավոր, երեք ուսանող ստացել է 19 միավոր, չորս ուսանող՝ 18 միավոր:

«Հայ նորագույն գրականություն և գրաքննադատություն» ծրագրով պաշտպանության մասնակցել է յոթ ուսանող, որոնցից երեք ուսանող ստացել է 20 միավոր, երեք ուսանող՝ 19 միավոր, մեկ ուսանող՝ 14 միավոր:

«Հայ գրականություն» ծրագրով պաշտպանությանը մասնակցել է վեց ուսանող, մեկ ուսանող չի ներկայացել պաշտպանությանը: Մեկ ուսանող ստացել է 20 միավոր, մեկ ուսանող՝ 19 միավոր, չորս ուսանող՝ 18:

Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանությունը անցել է գործող ընթացակարգին համապատասխան, բողոքարկումներ չեն եղել:

Պաշտպանության ներկայացված ավարտական աշխատանքները, ինչպես նաև մագիստրոսական թեզերը հիմնականում համապատասխանում էին ներկայացվող պահանջներին: Կառուցվածքային և տեխնիկական պահանջները հիմնականում պահպանված էին և համապատասխանում էին գործող կարգի պահանջներին:

Պաշտպանության ներկայացված աշխատանքներում նշված էին աշխատանքի նպատակը, խնդիրները, ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ներկայացված էր համապատասխան գրականությունը:

Ըստ սահմանված պահանջի՝ ուսանողները պաշտպանության ընթացքում ներկայացրել են լուսապատկերային ցուցադրություններ:

Պաշտպանությանը մասնակցած ուսանողները հիմնականում ունեին անհրաժեշտ մակարդակի գիտելիքներ, կարողանում էին պատշաճ ձևով ներկայացնել իրենց կատարած աշխատանքը, պատասխանել հանձնաժողովի հարցերին: Կային նաև որոշ անհաջող պատասխաններ, սակայն դրանք փոքրաթիվ էին, իսկ ընդհանուր առմամբ ուսանողների մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին: Ներկայացված աշխատանքների թեմաները մեծ մասամբ արդիական էին, հիմնականում վերաբերում էին տարակարծությունների տեղիք տված տարբեր խնդիրների: Դա հետաքրքիր էր դարձնում աշխատանքների պաշտպանության ընթացքը:

Անուամենայնիվ, որոշ աշխատանքներում վերլուծականությունը քիչ էր: Ցանկալի է, որ ուսանողներն ավելի մեծ ինքնուրույնություն ցուցաբերեն, համարձակորեն ներկայացնեն սեփական տեսակետները, եղած կարծիքները վերլուծաբար ներկայացնեն: Դրա շնորհիվ ինքնուրույնության մակարդակն ավելի բարձր կլինի: Մագիստրոսական աշխատանքների թեմաները հիմնականում հաջող էին ընտրված և արդիական էին:

Ներկայացված աշխատանքների ընդհանուր որակը, ուսանողների պատրաստվածությունը վկայում էին, որ աշխատանքը ղեկավարող դասախոսները և համապատասխան ամբիոնները իրենց աշխատանքը կատարել են անհրաժեշտ մակարդակով:

Գրախոսները ևս իրենց կարծիքները ներկայացրին պատշաճ կերպով: Գրախոսություններում հստակ նշված էին ավարտական աշխատանքներում և մագիստրոսական թեզերում առկա վրիպակներն ու թերությունները, արված էին տեղին առաջարկություններ, որոնք, կարծում ենք, օգտակար եղան ուսանողների համար և հետագայում գիտական այլ աշխատանքներ կատարելիս նրանց կօգնեն ճիշտ կողմնորոշվել:

Պաշտպանությունն անցավ պատշաճ մակարդակով, տեխնիկական խնդիրներ չառաջացան: Պահպանված էին ընթացակարգային պահանջները, որը վկայում է ֆակուլտետի ղեկանի և ղեկանատի աշխատակիցների լավ աշխատանքի մասին:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ ֆակուլտետի ղեկան, պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ գիտխորհուրդը արդեն հաստատել է ֆակուլտետի ներկայացրած առաջարկությունները, առաջիկայում արդեն կհայտարարվեն ամբիոնների վարիչների ընտրություններ, սահմանված ժամկետներում կլինեն առաջադրումներ, և կառուցվածքային այդ նոր ստորաբաժանումները նոր ուսումնական տարում արդեն կսկսեն գործել:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ ֆակուլտետի կրթական ծրագրերի ղեկավարները գիտխորհրդին ներկայացրին իրենց հաշվետվությունները: Ֆակուլտետի ղեկան, բ.գ.դ., պրոֆ. Ա. Ավագյանը մասնավորապես նշեց.

2021-22 ուսումնական տարում որպես առկա ուսուցմամբ «Հայ գրականություն» մագիստրատուրայի կրթական ծրագրերի ղեկավար իրականացրել էմ «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով» նախատեսված հետևյալ աշխատանքները.

- մագիստրատուրայի առաջին կուրս ընդունված ուսանողներին ծանոթացրել էմ իրենց իրավունքներին ու պարտականություններին:
- Ներկայացրել էմ գրադարանից օգտվելու կարգը:
- Ներկայացրել էմ գնահատման գործող համակարգը:
- Ներկայացրել էմ ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները:
- Ներկայացրել էմ պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կարգը:
- Առաջին կուրսի ուսանողներին ուղղորդել էմ ընտրելու կամ ընտրական դասընթացներ՝ համակարգելով գործընթացը:
- Աշխատանքային իրավունքների և հեռանկարների վերաբերյալ կողմնորոշիչ խորհրդատվություն:
- Մասնագիտական աշխատատեղերի հետ կապերի ստեղծում /գրականության ինստիտուտ, թանգարաններ, մատենադարան/:
- Գիտական աշխատանք կատարելու հմտություններ:

Ֆակուլտետի ղեկանի տեղակալ, դոց. Ա. Սարգսյանը նշեց.

2021-22 ուսումնական տարում որպես առկա և հեռակա ուսուցմամբ «Հայոց լեզու և գրականություն» բակալավրիատի կրթական ծրագրի ղեկավար իրականացրել էմ «Ուսումնական գործընթացի կազմակերպման կարգով» նախատեսված հետևյալ աշխատանքները:

Բակալավրիատի առաջին կուրս ընդունված ուսանողներին ծանոթացրել էմ իրենց իրավունքներին ու պարտականություններին, ներկայացրել էմ գնահատման գործող

համակարգը, գրադարանից օգտվելու կարգը, ԵՊՀ ուսանողական նպաստների, պետական և ներքուհական կրթաթոշակների հատկացման կարգը, ԵՊՀ ներքին կարգապահական կանոնները:

Բակալավրիատի առկա և հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողներին ուղղորդել են ընտրելու կամընտրական դասընթացներ՝ համակարգելով գործընթացը:

Բակալավրիատի առկա ուսուցման երկրորդ և հեռակա ուսուցման երրորդ կուրսերին մեկնաբանել են մասնագիտացման դասընթացների ընտրության կարգը:

Համակարգել և իրականացրել են ԵՊՀ ուսումնական գործընթացի կազմակերպման նոր կարգով հաստատված փոփոխություններին վերաբերող աշխատանքները:

Հայոց լեզվի ամբիոնի վարիչ, Բ.Գ.Պ., պրոֆ. Յու. Ավետիսյանը մասնավորապես նշեց.

Յուրաքանչյուր ուստարվա երկրորդ կիսամյակից վերանայվում է ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում գործող «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագրի բովանդակությունը, ուսանողական հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքներով ճշգրտվում են ծրագրում ներառված դասընթացների դասավանդման որակը, դրանց տեսագործական արդյունավետությունը: Միաժամանակ հիմք ընդունելով ուսանողների առաջարկները, աշխատաշուկայի պահանջարկը՝ ծրագրի ղեկավարի և դասախոսական հանձնաժողովի միջնորդությամբ վերջին 7-8 տարիներին պարբերաբար փոփոխության է ենթարկվում ծրագրի բովանդակությունը. առավելությունը տրվում է գործնական դասընթացներին: Հաշվետու տարին ևս բացառություն չէ: Այսպես:

Աշխատաշուկայի հետ կապը զարգացնելու նպատակով նշված մագիստրոսական ծրագրի՝ 2020-2022 ուստարվա ուսումնական պլանում մշակվել և ներդրվել են նոր դասընթացներ՝

1. Խմբագրական և հրատարակչական գործ (դասավանդումն իրականացնում են «Չանգակ» հրատարակչության մասնագետները՝ հրատ. տնօրեն Ս. Մկրտչյան և հրատ. գործի գլխավոր մենեջեր Ա. Զիտչյան):

2. Լեզու, մեդիամտածողություն, հասարակություն (ԶԼՄ տարբեր հարթակներում հաղորդակցական և տեղեկատվական մշակույթի առանձնահատկությունների վերհանում, դասախոս՝ Ա. Մենեմշյան):

3. Գրական թարգմանություն (գործառական տարաբնույթ տեքստերի գրական թարգմանության առանձնահատկությունների վերհանում, դասախոս՝ Հ. Բաղդասարյան):

4. Դեռևս նախորդ ուսումնական պլանով կրկնակի ժամաքանակ է հատկացվել անգլերենի ուսուցմանը, ինչը ընթացիկ ծրագրում պահպանվել է նույնությամբ:

Հաշվետու տարում պարբերաբար անցկացվել են զրույցներ, քննարկումներ մագիստրատուրայի ուսանողների հետ, նկատի են առնվել նրանց կարծիքները, որոնք մեծ մասամբ դրական են, գոհացուցիչ: Թերևս կան մասնավոր խնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են գործնական որոշ դասընթացների հատկացվող քիչ ժամաքանակին, ընթացիկ քննությունների լինել-չլինելուն. սրանք հարցեր են, որոնք պայմանավորված են ԵՊՀ ուսումնական ընդհանուր կանոնակարգերով, և մեր միջամտությունն այս պարագայում դեռևս ուժ չունի:

Բակալավրի շրջանավարտների մի մասը ներկայիս հետաքրքրված է նշված ծրագրով, և մեր դասախոսական խումբը ապահովում է պատշաճ իրազեկում:

Ցանկալի կլիներ, իհարկե, ծրագրի ղեկավարման այս ընթացքը միայն դրական և առաջադիմական հաշվետվությամբ ամփոփելու, այսուհանդերձ հաշվետու լինելը նաև խնդիրներին անդրադառնալու պարտավորություն է: Որքան էլ փոփոխվում, թարմացվում է մագիստրոսական ծրագիրը, ներգրավվում են հրավիրյալ մասնագետներ, այնուամենայնիվ

աշխատաշուկայի հետ մայր բուհի թույլ արտահայտված կապերի հետևանքով, ինչպես նաև հենց մագիստրոսի որակավորման չտարբերակվածության պատճառով դժվար են լինում ընդհանրապես մագիստրատուրա ձևավորելու հարցը, մագիստրոս շրջանավարտների աշխատանքի խնդրի լուծումը: Ըստ էության, մեզանում անհատակ են բակալավրի և մագիստրոսի կոչումների սահմանները, ավելին՝ մասնագիտական ոլորտից դուրս մագիստրոսը չունի որևէ առավելություն բակալավրի համեմատությամբ՝ ի տարբերություն Բուլոնիայի կրթակարգը որդեգրած օտարերկրյա բուհերի: Եվ հետևաբար 2 տարվա ուսումնառությունը ընկալվում/ դառնում է ֆինանսական հավելյալ բեռ և ժամանակի կորուստ: Ուստի տարեցտարի ոչ միայն մեր, այլև ԵՊՀ այլ ֆակուլտետներում նվազում է մագիստրատուրա դիմողների քանակը: Կարծում ենք՝ այստեղ արդեն զգալի դերակատարություն ունի ոչ այնքան արդիականացված ծրագիրը, որքան բուհը. վերջինս պետք է աշխատեցնի լուրջ գործիքակազմ: Նախ՝ աշխատաշուկայում պետք է շատ որոշակի սահմանվեն մագիստրոսի որակավորման աստիճանի առավելությունները, ապա՝ աշխատաշուկայի հետ պետք է ձևավորվեն անհրաժեշտ կապեր, մշակվեն ուսանողների փոխանակման ծրագրեր և այլն, որոնք մեծապես կբարձրացնեն և՛ մագիստրատուրայի վարկանիշը, և՛ դիմողների քանակը:

Հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, ր.գ.դ., պրոֆ. Ա. Աբաջյանը մասնավորապես նշեց.

ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում գործող «Հայոց լեզվի պատմություն և լեզվաբանություն» մագիստրոսական ծրագիրն իր որակով եզակի է Հայաստանում և նրանից դուրս, քանի որ ծրագրի բովանդակությունը հնարավորություն է ընձեռում պատրաստել դասական լեզուների, ամենից առաջ գրաբարի խոր իմացությամբ մասնագետներ, որոնք հընթացս հմտություններ են ձեռք բերում հնագրության և ձեռագրաբանության կարևոր ասպարեզներում գործելու համար: Հայագիտական մասնագիտացումն ամբողջանում է ընդհանուր լեզվաբանական գիտակարգերի, հին հունարենի բավարար մակարդակի իմացությամբ: Ընդհանուր լեզվաբանության ավանդական և հատկապես արդի ուսմունքներին ծանոթությունը թույլ է տալիս սույն մագիստրոսական ծրագրի շրջանավարտներին հայերենագիտության հիմնահարցերը քննարկել միջազգային չափորոշիչներին համապատասխանող մեթոդաբանությամբ և գործիքակազմով:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում անցկացնում ենք ուսանողների հետ բովանդակային քննարկումներ՝ ապահովելով ուսանող և դասախոս անմիջական կապը, վեր հանելով դասընթացների հանդեպ ուսանողների հետաքրքրության կորը, նրանց պահանջները, առաջարկությունները, բայց ամենակարևորը արդի բանասիրական աշխատաշուկայի տեղաշարժերը, որպեսզի կարողանանք մեր ապագա մագիստրոսների համար աշխատանքի հնարավորինս լայն տիրույթ ստեղծել: Քանի որ բանասիրական աշխատաշուկան Հայաստանում և հատկապես արտերկրի հայագիտական կենտրոններում հատկապես կարևորում է հին և միջին հայերենների խորքային իմացությունը, ձեռագրեր կարդալու և նկարագրելու հմտությունների առկայությունը, ներդրել ենք այնպիսի դասընթացներ, ինչպես՝ «Հայ ձեռագրատների ժառանգության ուսումնասիրություն» (դասախոս՝ Ն. Դիլբարյան), «Գրաբարյան, միջինհայերենյան բնագրերի ժանրային առանձնահատկությունները» (դասախոս՝ Ս. Գրիգորյան): Հայ լեզվաբանության պատմության հիմնահարցերին է վերաբերում «Հայերենի խոսքի մասերի ուսմունքը» դասընթացը (դասախոս՝ Ա. Աբաջյան):

Միաժամանակ մեծ կարևորություն է տրվում մասնագիտական և ընդհանուր լեզվաբանական գիտելիքների ամրակայմանը. այս նպատակի իրագործմանն են ուղղված

հետևյալ դասընթացները՝ «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» (դասախոս՝ Ս. Ավետյան), «Համեմատական քերականություն» (դասախոս՝ Վ. Պետրոսյան), «Լեզվաբանական տիպաբանություն» (դասախոս՝ Ս. Ավետյան), «Դասական լեզուներ» (դասախոս՝ Ս. Ավետյան):

Դասընթացները հիմնականում կազմակերպվում են տեսական և գործնական դասերի հավասարակշիռ համադրմամբ, որպեսզի ապագա մագիստրոսները կարողանան իրենց գուտ տեսական գիտելիքներն ու հմտությունները կիրառել գործնական մակարդակում, ինչպես օրինակ՝ բնագրային թարգմանություններում և փոխադրություններում, ձեռագրագիտական և հնագրական աշխատանքներում: Այս նպատակով արտալսարանային դաս-քննարկումներ են անցկացվում Մաշտոցի անվան Մատենադարանում: Ապագա մագիստրոսներին հանձնարարվում են բազմաբնույթ հետազոտական աշխատանքներ, որոնց ներկայացման համար պահանջվում են ժամանակակից գործիքներ, այսինքն՝ հետազոտվող նյութը լեզվավիճակագրական քննության է ենթարկվում սահիկաշարերի կազմության միջոցով, որտեղ անպայմանորեն օգտագործվում են դիագրամներ, գծապատկերներ և աղյուսակներ, զարկ է տրվում բանավոր գիտական խոսքի զարգացմանը:

Վերջում անդրադառնանք մի կարևոր խնդրի, ինչպիսին մագիստոսի աստիճանի ընձեռած առավելությունների և պահանջարկվածության տարանջատումն է, որն ուղիղ համեմատական կապ ունի մագիստրոսական կրթական ծրագրերում ուսանողների ընդգրկման քանակային ցուցանշի հետ: Առաջարկում ենք պետականորեն ԿԳՄՍ նախարարության միջոցով հստակ սահմանել աստիճանակարգության այն ոլորտները, որտեղ մագիստրոսական աստիճանը պարտադիր է կամ ցանկալի, առավելություն ընձեռող, որովհետև միայն այդ կերպ հնարավոր է 21-րդ դարում, որը նեղ մասնագիտացումների ժամանակաշրջան է, ապահովել զգալի հոսք մագիստրոսական ծրագրերում:

Գիտխորհրդի քննարկմանը ներկայացվեց նաև 2022-23 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաստատման հարցը:

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ ֆակուլտետի ղեկան, բ.գ.դ. պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց հայ բանասիրության ֆակուլտետի ղեկանի տեղակալ բ.գ.թ., դոց. Ա. Սարգսյանին, ով ներկայացրեց ուսումնական գործընթացների կազմակերպման նոր կարգը՝ ներկաների ուշադրությունը հրավիրելով հատկապես առանցքային նշանակություն ունեցող փոփոխությունների վրա: Բուռն քննարկում ծավալվեց հատկապես հաճախումների համար տրվող միավորի չափի շուրջ: Ելույթ ունեցողները առաջարկում էին, որ գիտխորհուրդը ամբիոնների առաջարկությամբ սահմանի միասնական շեմ, որպեսզի հատկապես գործնական շատ խմբեր ունեցող առարկաների դեպքում չկիրառվեն տարբեր մոտեցումներ և ուսանողները չտուժեն:

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ ֆակուլտետի ղեկան, բ.գ.դ. պրոֆ. Ա. Ավագյանը տեղեկացրեց, որ ԵՊՀ գիտխորհուրդը հաստատել է «Երևանի պետական համալսարանի մագիստրատուրայի (առկա և հեռակա ուսուցում) ընդունելության» կարգը: Ա. Ավագյանը տեղեկացրեց նաև, որ քննարկվել և ընդունվել է նաև «Բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով ուսումնական գործընթացի կազմակերպման» կարգում փոփոխություն կատարելու հարցը: ԵՊՀ գիտխորհուրդը հաստատել է նաև «Երևանի պետական համալսարանի ուսանողների պրակտիկայի կազմակերպման (նոր խմբագրություն)» կանոնակարգը:

Օրակարգի 7-րդ` առկա ասպիրանտների և հայցորդների ատեստացիայի առիթով առանձին-առանձին ներս հրավիրվեցին համապատասխան ամբիոնների առկա ուսուցման ասպիրանտներն ու հայցորդները: Վերջիններս ներկայացրին հաշվետու ժամանակահատվածում իրենց կատարած աշխատանքները: Գիտխորհրդի անդամները մասնավորապես.

ԼՄԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 3-րդ կուրս) **Նռանե Մանվելի Սարգսյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Մ. Ֆելեքյանը, Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը և ուրիշներ:

Նշվեց, որ Նռանե Սարգսյանը 2019 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Գրաբար - միջին հայերեն - արևմտահայերեն փոխանցումները բայական համակարգում» (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան:

Նռանե Սարգսյանը 2020-2021 ուստարում լրացրել է մասնագիտական պրակտիկայի ծրագրով նախատեսված ժամաքանակը («Եվրոպական լեզուների և հաղորդակցության» (հեռակա, երկու կիսամյակ), «Մաթեմատիկայի և մեխանիկայի» (առկա, երկու կիսամյակ), «Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի» (առկա, մեկ կիսամյակ) ֆակուլտետներում): Մասնակցել է պարտադիր (3) և ոչ պարտադիր (3) դասընթացներին: 2021-2022 ուստարում տպագրության է հանձնել հինգ հոդված: Եվս մեկ հոդված շարադրման փուլում է: Շարադրել է բայի եղանակներին վերաբերող տեսական հատվածը, ամբողջացրել է ատենախոսությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Նռանե Սարգսյանին** ատեստավորել:

ԼՄԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 2-րդ կուրս) **Լիլիթ Հմայակի Օստուրյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, դոց. դոց. Մ. Ֆելեքյանը, Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Լիլիթ Օստուրյանը 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Բառաքերականական փոխակերպումները ռուս-հայերեն թարգմանություններում>> (Վ. Պիկուլ <<Ֆավորիտ >>)>> (Ժ.02.01 «Հայոց լեզու»), ղեկավար՝ ք. գ. դ., պրոֆ. Յու. Ավետիսյան: Լ. Օստուրյանը 2021-2022 ուստարում մասնակցել է «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում», «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն», «Կայուն զարգացում և զլոբալ մարտահրավերներ» դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ուսումնասիրել է տեսական գրականությունը: Տպագրության է պատրաստել քերականական փոխակերպումների վերաբերյալ երկու հոդված՝ «Խոսքիմասային փոխարինումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ», «Գոյականի քերականական կարգերի փոխարինումները Վ. Պիկուլի «Ֆավորիտ» վեպի հայերեն թարգմանության մեջ»: Այժմ շարադրման փուլում է երրորդ հոդվածը՝ նվիրված բայի քերականական կարգերի փոխարինումներին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Լիլիթ Օստուրյանին** ատեստավորել:

ԼՄԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 1-ին կուրս) **Վալտեր Տիգրանի Բերբերյանի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Մ. Ֆելեքյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Վալտեր Բերբերյանը 2021 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Հայ ոճագիտական մտքի զարգացման հիմնախնդիրները>> (1950-ական - 2020-ական թթ.) (Ժ.02.01<<Հայոց լեզու>>), ղեկավար՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Յու. Ավետիսյան: Վ. Բերբերյանը 2021-2022 ուստարում մասնակցել է պարտադիր ու ընտրովի դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Մասնակցել է հանրապետական և միջազգային մի քանի գիտաժողովների (ԳՊՀ հանրապետական գիտաժողով, «Լեզուն մշակույթի միջոցով» խորագրով 5-րդ միջազգային գիտաժողով, «Հակոբ Կարապենց» միջազգային գիտաժողով և այլն): Erasmus+ շարժունության ծրագրով նախորդ տարի մասնակցել է "Environmental Science Education for Sustainable Human Health" դպրոցին (Վրաստան)՝ ստանալով 2 կրեդիտ, իսկ այս տարի՝ "Overcoming Prejudice (OP)" ծրագրին (Ռումինիա): Ուսումնասիրել է տեսական գրականությունը: Շարադրման փուլում են հոդվածները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Վալտեր Բերբերյանին** ատեստավորել:

ԼՄԵՑԻՆ - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում, 2-րդ կուրս) **Հաջար Ռեզայի Մումենիի** ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. Ա. Ավագյանը, պրոֆ. Յու. Ավետիսյանը, դոց. Մ. Ֆելեքյանը, դոց. Ա. Սարգսյանը, դոց. Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Հաջար Մումենիին ԵՊՀ-ի և Սպահանի (Իրանի) համալսարանի միջև համագործակցության պայմանագրի շրջանակներում 2020 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) <<Հայոց լեզու>> մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է <<Մումատիկ դարձվածքները պարսկերենում և հայերենում (իմաստակառուցվածքային և մշակութաբանական քննություն)>>, ղեկավար՝ Բ. Գ. Պ., դոց. Փառանձեմ Մեյթիխանյան: 2021-2022 ուստարում Հաջար Մումենին որևէ կապ չի հաստատել ամբիոնի և ղեկավարի հետ, չի ներկայացրել հաշվետվություն, կապի միջոցներով հաղորդագրությունները մնում են անպատասխան: Տեղեկություն կա միայն, որ այս տարվա ընթացքում եղել է ՀՀ-ում, հանձնել է <<Անզլերեն>> առարկայից քննություն, ստացել է <<լավ>> գնահատական: Ամբիոնը հակված չէ նրա աշխատանքը գնահատել բավարար:

ՈՐՈՇԵՑԻՆ - Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ասպիրանտը արտասահմանի քաղաքացի է, միջնորդել ԵՊՀ-ի միջազգային համագործակցության վարչության առջև հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ Հաջար Մումենիի ատեստավորումը (մինչև սեպտեմբերի 1-ը) ժամանակավորապես հետաձգելու համար:

ԼՄԵՑԻՆ - Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Լիանա Ազիզյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ասպիրանտ Լ. Ազիզյանը 2021-2022 ուստարում աշխատել է ատենախոսության թեմայի վրա: Մասնավորապես՝ գիտական հանդեսներում հրատարակման է ներկայացրել թեմային առնչվող 2 հոդված (1. Գրաբարյան հայերենի և լատիներենի $j(y)$ և $z(w)$ ձայնորդները (զուգադրական քննություն), 2. Գրաբարյան հայերենի և լատիներենի ձայնավորական համակարգերի զուգադրական քննություն), ինչպես նաև հանձնել է որակավորման քննությունը «ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» (Ժ.02.02) մասնագիտացմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ– Ընդհանուր լեզվաբանության ամբիոնի առկա ուսուցման ասպիրանտ Լիանա Ազիզյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Մարիանա Մամվելի Բոցինյանի ատեստավորման հարցը /թեմա՝ «Չալդրի և հարակից շրջանների հայերեն խոսվածքները», գիտական ղեկավար՝ հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյան/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 2021-2022 ուստարվա ընթացքում ասպիրանտը հավաքել է բոլոր անհրաժեշտ կրեդիտները՝ մասնակցելով պարտադիր և ոչ պարտադիր դասընթացներին: Գիտական երկու հոդվածներ գտնվում են խմբագրման փուլում, մեկը՝ տպագրման: Թեկնածուական ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները պատրաստ են, 3-րդ գլուխը գտնվում է շարադրանքի փուլում: Հոկտեմբեր ամսին հերթական այցն է իրականացրել բարբառախոս վայրեր՝ Դոնի Ռոստովի մարզ՝ Չալդրը քաղաք, Թոփթի, Մեծ Մալա, Սուլթան Մալա գյուղեր՝ գրառելու նորանոր տվյալներ: Մասնագիտական քննությանը նախատեսում է մասնակցել ա/թ հունիս ամսին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Մարիանա Բոցինյանին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի առաջին տարվա առկա ասպիրանտ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Կամո Անթերանիկի Էբրահիմի ատեստավորման հարցը: Կամո Անթերանիկի Էբրահիմի թեկնածուական ատենախոսության թեման է <<Պարսկերենից փոխառյալ կենդանանունները միջին հայերենում և նրանց պատմական զարգացումը արդի արևելահայերենում>>: 18.01.2021թ. N 7/2 հրամանով գիտական ղեկավար է նշանակվել հայոց լեզվի պատմության ամբիոնի վարիչ, Բ. գ. դ., պրոֆ. Աննա Հենրիկի Աբաջյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ա. Աբաջյանը, Յու. Ավետիսյանը, դոց. Վ. Պետրոսյանը և ուրիշներ:

Նշվեց, որ 2021-2022 ուստարվա ընթացքում ասպիրանտը կատարել է որոշակի աշխատանք. ա/ ուսումնասիրել է Ռուբեն Ղազարյանի <<Կենդանիների անունների հայերեն-ռուսերեն-լատիներեն կարգաբանական բառարանի>> Ա /կաթնասուններ/ և Բ /թոչուններ/ գրքերը՝ քարտագրելով պարսկերենից փոխառյալ կենդանանունները, բ/ հրատարակության է պատրաստել հոդված պարսկական փոխառությունների վերաբերյալ: Որակավորման քննություն առայժմ չի հանձնել: Շարադրում է ատենախոսության առաջին գլուխը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայոց լեզվի պատմության ամբիոնի առկա ասպիրանտ Կամո Անթերանիկի Էբրահիմին ատեստավորել:

ԼՍԵՑԻՆ – Հայ նորագույն գրականության ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ Մալայի Աղիայի Քյուրքճեանի հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Մալայի Քյուրքճեանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Պոդոս Սնապյան. գրականագետը, գրողը» (ղեկավար՝ Բ.գ.դ., պրոֆ. Վ. Գաբրիելյան):

Նա ուսումնասիրել է Պ. Սնապյանի գրական-քննադատական ողջ ժառանգությունը և ծանոթացել նրա գործերին վերաբերող կարծիքներին և տեսակետներին: Պատրաստվում է

հրատարակելու երկու հոդված, որոնցից մեկում քննվում են Մնասյանի պատմվածքների որոշ խնդիրներ, մյուսում՝ նրա քննադատական հայացքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հայ նորագույն գրականության ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցման ասպիրանտ **Սալյի Աղիայի Քյուրքճեանին** ատեստավորել:

ԼՄԵՑԻՆ – Արցախի պետական համալսարանի ռեկտոր Ա. Սարգսյանի՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանին ուղղված գրությունը՝ Արցախի պետական համալսարանի Գրականության և Ժուռնալիստիկայի ամբիոնի առաջին տարվա հայցորդ Անի Արթուրի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ նպատակահարմար է Արցախի պետական համալսարանի Գրականության և Ժուռնալիստիկայի ամբիոնի առաջին տարվա հայցորդ Ա. Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայոց ցեղասպանության պատկերումը Հովհաննես Շիրազի քնարերգության մեջ»՝ «Ժ.01.02 - Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

Նշվեց նաև, որ հայ նորագույն գրականության ամբիոնը չի առարկում, որ գիտական ղեկավար նշանակվի ԵՊՀ հայ գրականության պատմության ամբիոնի պրոֆ., բան. գիտ. դոկտոր Սամվել Պարզևի Մուրադյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Անի Արթուրի Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Հայոց ցեղասպանության պատկերումը Հովհաննես Շիրազի քնարերգության մեջ»՝ «Ժ.01.02 - Նորագույն շրջանի հայ գրականություն» մասնագիտությամբ:

2. Ատենախոսության գիտական ղեկավար հաստատել բ.գ.դ., պրոֆ. Սամվել Պարզևի Մուրադյանին:

ԼՄԵՑԻՆ- Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Արման Արթուրի Վերանյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, բ.գ.թ., դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ Արման Վերանյանի 2021 թվականին ընդունվել է առկա ուսուցմամբ ասպիրանտուրա՝ ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան «Հայ դասական գրականություն» (Ժ. 01.01) մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսության թեման է «Մուրացանի ստեղծագործության պոետիկան»: Գիտական ղեկավար է բ.գ.դ., պրոֆեսոր Ալ. Մակարյանը: 2021-22 թթ. ընթացքում գրադվել է թեմային առնչվող նյութերի հավաքագրման աշխատանքներով, ուսումնասիրել է գրական դաշտը, կարդացել սկզբնաղբյուրները: Նշված ժամանակահատվածում մասնակցել է պարտադիր և ընտրովի բոլոր դասընթացներին, հաջողությամբ հանձնել ստուգաքնները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները: Ուսումնական տարվա ավարտին կավարտի ասպիրանտուրայի կրթական բաղադրիչը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ատեստավորել Արման Արթուրի Վերանյանին:

ԼՄԵՑԻՆ - Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Մանե Դավթի Դանիելյանի ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ ասպիրանտ Մանե Դանիելյանը 2020 թվականին ընդունվել է առկա ուսուցմամբ ասպիրանտուրա ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան Հայ դասական գրականություն (Ժ. 01.01) մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսության թեման է

«Կնոջ ազգային և հասարակական դերի ըմբռումը՝ ըստ Բաֆֆու»՝ Բ. Գ. Պ., պրոֆ. Ալ. Ա. Մակարյանի գիտական ղեկավարությամբ: 2021-2022 ուստարում մասնակցել է երկու գիտաժողովի: Վլադիմիր Կիրակոսյանի մահվան տարելիցին և հիշատակի ոգեկոչմանը նվիրված հանրապետական գիտաժողովին հանդես է եկել «Կնոջ կերպարը Բաֆֆու քնարերգության մեջ» զեկուցմամբ:

Թեմայի հետ առնչվող նյութերի վերընթերցման, հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգընթաց պատրաստվում է տպագրել երկու հոդված, որոնցից մեկը՝ համահեղինակությամբ:

Ուսումնասիրում է Բաֆֆու բազմաժանր ու բազմաշերտ գրական ժառանգությունը, գրողին նվիրված մենագրություններն ու այլ ուսումնասիրությունները (Ա.Ավթանդիլյան, Ա.Գևորգյան, Ե.Պետրոսյան, Ս. Մարինյան):

2020-2021 ուստարում հաջողությամբ հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները:

2020-2021 ուստարում որպես դասախոս աշխատելով Հայ-ռուսական համալսարանում՝ լրացրել է ասպիրանտական պրակտիկայի համար անհրաժեշտ 35 դասաժամերը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Ատեստավորել Մանե Դավթի Դանիելյանին:

Ընթացիկ հարցերում քննարկվեցին.

ա/ԼՄԵՑԻՆ՝ Բ.գ.թ. Աստղիկ Սողոյանի՝ «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» մենագրությունը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՑՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Ժ. Քալանթարյանը, Ալ. Մակարյանը, Ս. Մուրադյանը, Վ. Սաֆարյանը, Բ.գ.թ., դոց. Ռ. Էլոյանը:

Նշվեց, որ մենագրությունը նվիրված է Խաչատուր Աբովյանի ստեղծագործության կառուցվածքային քննությանը: Համադրելով պատմահամեմատական, զուգադրական, կառուցվածքային, հերմենևտիկական և միֆաքննադատական մեթոդները և կիրառելով ժամանակակից մոտեցումներ ու մեթոդական գործիքակազմ՝ հեղինակ Ա. Սողոյանը հայ նոր գրականության հիմնադրի ստեղծագործությունը ներկայացնում է նոր լույսի ներքո:

Երեք գլուխներից բաղկացած աշխատանքում հեղինակն անդրադառնում է Աբովյանի ստեղծագործության տարբեր կողմերին: Առաջին գլուխը նվիրված է գրողի չափածոյի պատումի առանձնահատկություններին: Մենագրության այս հատվածում ուշարժան է հատկապես հայ նոր գրականության հիմնադրի քիչ ուսումնասիրված երկերից մեկի՝ «Աղասու խաղը» պոեմի վերլուծությունը, որը դիտարկվում է մի կողմից՝ երկխոսային կառույցի և բազմաշերտ պատումների հարաբերության, մյուս կողմից՝ նշանագիտության և միֆաքննադատության մոտեցումներով: Հեղինակին հաջողվում է բացել պոեմի քողարկված շերտերը և ներկայացնել բանահյուսական տարբեր դիպաշարերի, կառույցների և արքետիպերի ներհյուսումներն ընդհանուր դիպաշարին:

Երկրորդ գլխում Ա. Սողոյանն ուսումնասիրել է Աբովյանի միջժանրային ստեղծագործությունները՝ մանկավարժական և հուշագրական երկերը՝ անդրադառնալով դրանց գեղարվեստական առանձնահատկություններին և դիտարկելով դրանք իբրև գրական տեքստեր: Դիտելի է հատկապես «Խաղաղություն մանկանց...» գործի քննությունը՝ գրականություն-հոգեբանություն կապի համապատկերում:

Երրորդ գլուխը նվիրված է Աբովյանի գեղարվեստական արձակին՝ վեպին և պատմվածքներին: Հեղինակը «Վերք Հայաստանի. Ողբ հայրենասիրի» վեպը քննում է պատմողի և ընթերցողի կերպարների, հատվածական (ֆրագմենտայ) բնույթի, ձայնի և լռության, շարժման և անշարժության, գիշերվա և ցերեկվա հերթափոխության, տեմպի և ռիթմի

դիտանկյուններից: Այս քննությամբ առավել ընկալելի է դառնում հեղինակային պատումի և հերոսների անհատականացված խոսքի հարաբերակցությունն ի նպաստ վեպի գեղարվեստականության: Ա. Սողոյանն այդ երկը քննում է հերոսի ճանապարհի մոնումենտի ցիկլային շրջանի հիման վրա՝ այն դիտելով բանահյուսական հեքիաթի և միֆի կառույցով:

Ա. Սողոյանը Աբովյանի ստեղծագործությունը վերլուծում է նոր հայացքով, բայց և հենվելով նախորդող արվյանագետների ավանդների վրա: Պատշաճորեն գնահատելով նախորդների գիտական վաստակը՝ նա անդրադառնում է նոր խնդիրների՝ ըստ պահանջի կատարելով համապատասխան մեջբերումներ: Որպես գիտատեսական որոշակի արժանիքներով օժտված ուսումնասիրություն՝ մենագրությունը օգտակար կլինի ուսանողությանը, ուսուցիչներին, Աբովյանի ստեղծագործությամբ և հայ գրականության հարցերով հետաքրքրվող լայն շրջանակներին: Մենագրության խմբագիրն է Բ. Գ. Ղ., պրոֆ. Ալ. Մակարյանը, գրախոսները՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Ս. Սուրադյանը և Բ.Գ.Թ, դոցենտ Ա. Ջրբաշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. - Բ.Գ.Թ. Աստղիկ Սողոյանի՝ «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը» մենագրությունը երաշխավորել տպագրության:

Բ/ ԼՄԵՑԻՆ – Պրոֆ. Մ. Ջանփոլադյանի «На свете лишь одна Армения...» («Աշխարհում մենմիակ Հայաստան կա...») գիրքը տպագրության երաշխավորելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ – Պրոֆ. պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. դոց. Ս. Գրիգորյանը, Ա. Ջրբաշյանը:

Նշվեց, որ պրոֆ. Ջանփոլադյանի «На свете лишь одна Армения...» գիրքն ընդգրկում է ինը հոդվածներ, որոնք կապված են իրար մեկ ընդհանուր թեմայով՝ Հայաստանը և XX-րդ դարի ռուս բանաստեղծները: Ժողովածուում ներկայացված է Վալերի Բրյուսովի՝ իբրև «Поэзия Армении» անթոլոգիայի խմբագրի դերը, նաև քննության են առնված հայ բազմադարյան պոեզիայի բրյուսովյան վերլուծություններն ու գնահատականները: Առանձին հոդված է նվիրված «Հայոց եղեռնի արտացոլումը XX-րդ դարի ռուս պոեզիայում» թեմային: Մ. Ջանփոլադյանի գրքում արծարծված են նաև գիտական բնույթի մի շարք խնդիրներ՝ կապված պոեզիայի թարգմանության հարցերի, գրական կապերի ուսումնասիրության հետ: Գիրքը կարող է հետաքրքրել ինչպես բանասերներին, այնպես էլ ընթերցող լայն շրջանակներին:

Ժողովածուի վերաբերյալ առկա են Բ.Գ.Ղ. Սուսաննա Հովհաննիսյանի, Բ.Գ.Թ. Աշխեն Ջրբաշյանի կարծիքները, խմբագիրն է Ալբերտ Նալբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ– Պրոֆ. Մ. Ջանփոլադյանի «На свете лишь одна Армения...» («Աշխարհում մենմիակ Հայաստան կա...») ժողովածու էրաշխավորել տպագրության:

Գ/ ԼՄԵՑԻՆ– Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ **Լուսինե Համլետի Հովհաննիսյանի** ատենախոսության թեմայի վերահաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ– Պրոֆ. պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց. դոց. Ս. Ֆելեքյանը, Ա. Սարգսյանը, Ա. Տեր-Մինասյանը:

Նշվեց, որ Լուսինե Հովհաննիսյանը 2008 թվականին ձևակերպվել է հայցորդ: Ատենախոսության թեմա է հաստատվել «Գոյականական բառակապակցությունները Պարույր Սևակի պոեզիայում» (Ժ. 02. 01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ), ղեկավար՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Ա. Աբաջյան:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հայոց լեզվի ամբիոնի հայցորդ Լուսինե Հովհաննիսյանի ատենախոսության թեմա վերահաստատել «Բառակապակցությունները Պարույր Սևակի չափածոյում» (Ժ. 02. 01 - «Հայոց լեզու» մասնագիտությամբ):

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝
ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ
ԴՈՑ. Ա. ԳԱԼՍՏՅԱՆ**